ՓՈՒՆՋԻՆԷԼԼԱ



ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
ՄԷԿ ԱՐԱՐ

Հայացուց

ՄԻՀՐԴԱՏ Մ. ՀԱՑԿԱՆՅՆ
Դերասան եւ Յուշարար

Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պարզ Ակի, Բէյոգլու Էմ. խան

Կ. ՊՕԼԻՍ
Տպագր. «ԹԷՈՉԻԼԱԹ»
1930

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

897.33

493

ՓՈՒՆՋԻՆԷԼԱ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ

A II 379664

Թուրքերէնէ թարգմանեց՝

ՄԻՀՐԴԱՏ ՀԱՅԿԱԶՆ

Հրատարակութիւն ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պոլիս, Պապը Ալի, Բէշիր էֆ. խան

Տպագրութիւն «ԹԷՍՀԻԼԱԹ»
Կ. Պոլիս 1930

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ ՁԿԱԴԵՄԻԱ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Տօն Ալֆօնս
Տօն Լօբէզ
Տօն Ճիօվանընի
Էլէօնօրա
Գօլմպինա
Փունչինէլլա

Տանուտէրը
Եղբօրորդին
Փեսացուն
Տօն Ալֆօնսի աղջիկը
» » սպասուհին
Ճիօվանընիի ծառան

ՓՈՒՆՉԻՆԷԼԼԱ

Բեմը կը ներկայացնէ հրապարակ մը

ՏԵՍԻԼ Ա.

Գիշեր է. Տօն Ճիօվանընի եւ Փունչինէլլա

Ճիօվանընի.— Եռուէս եկուր, Փունչինէլլա։

Փունչինէլլա.— Շատ աղէկ... բայց չեմ տեսնար կոր...

Ճիօվան.— Դէպի ձայնիս կողմը եկուր։

Փուն.— Քեզի չտեսնելէս եռքը, ձայնդ ի՞նչպէս կրնամ տեսնել... Աստուած պէլան տայ աս բնութեան։

Ճիօվ.— Բնութենէն ի՞նչ կը դժգոհիս։

Փուն.— Կը դժգոհիմ հապա, միթէ դժգոհելու իրաւունք չունի՞մ, որովհետեւ ամէն բան գլխիվայր ստեղծեր է։

Ճիօվ.— Ի՞նչպէս...

Փուն.— Զրսե՞ս միւսիւ, բնութիւնը մեզի քանի՞ աչք տուաւ։

Ճիօվ.— Երկու։

Փուն.— Է՛յ, ո՞ւր դրաւ։

Ճիօվ.— Ճակատէն վար։

Փուն.— Տեսա՞ր մի որ ամէն բան գլխի վայր է. երկու աչք ճակատէս վար դնելուն, աւելի աղէկ չէ՞ր

ըլլար որ մէկ հատը ճակտիս մէջտեղը դներ միւսն ալ ոտքիս ծայրը, ես ալ քարը կը տեսնէի տէ գետինը չէի գլորեր...։

Ճիօվ.— Զայնդ կտրէ ապուշ, զբօսնելու ժամանակ չէ. ինծի մոիկ ըրէ. լսածիս համաձայն, Տօն Ալֆոնսին սիրուհիին տունը աս ըլլալու է. դուռը զարկ և իմ գալս հիմացուր...

Փուն.— Է՜հ, ո՞վ հիմա՞ պիտի երթայ Տօմաթէս սիրուհիին տունը պիտի փնտռէ։

Ճիօվ.— Շո՛ւտ, հիմա գնա, թէ չէ ոսկորներդ ամբողջ կը կոտրտեմ։

Գօլոմպ, (ներսէն).— Տօն Լօրէզ, վերէն ինքզինքդ վար նետէ... եթէ աղաս իմանալու ըլլայ, դիս լաւ մը կը ծեծէ և քեզի ալ բանտ կը նետէ։

Լօրէզ.— Ահա՛ կը նետուիմ կոր... (պատուհանէն կը ցատկէ եւ Փունչինէլլայի վրայ կ'իյնայ)։

Փուն.— Ա՜յ... ա՜յ... ա՜յ... ա՜խ...

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք եւ Տօն Լօրէզ

Լօրէզ.— Հա՛, աս իմ ծառաս է. դիացած ըլլաս որ այս գիշեր Մատամ Էլէօնորային տունն էի. հայրը և մայրը լսելուն համար ուրիշ ճար մը, փախուստի ճամբայ մը չի գտնելուս, պատուհանէն վար ցատկեցի...

Փուն.— Ինչո՞ւս պէտք, իշու գլուխ։

Լօր.— Վա՛յ, իմ ծառաս չէ եղեր։

Ճիօվ.— Փունչինէլլա՛։

Փուն.— Հրամմէ տէր իմ։

Ճիօվ.— Ես հոս եմ, այս կողմը եկուր։

Փուն.— Ճանըմ, ո՛ւր ես... ո՞ր կողմը գամ... վա՛յ Աստուած պէլաղ տայ. գացի եկայ տէ ձեռքս

աղտոտ, իւղոտ թէնճիրէին մէջ խոթեցի... է՜ֆ, աս ի՞նչ աղտոտ կը հոտի կոր։

Ճիօվ.— Աւանակ, անիկա իմ բերանս էր։

Փուն.— Ես ի՞նչ գիտնամ... հոտէն ինծի անանկ երեւաց։

Ճիօվ.— Ըսէ տեսնեմ, տունը գտա՞ր, հրամաններս գործադրեցի՞ր...

Փուն.— Տէր իմ, ձեզի բան մը պիտի հարցնեմ։

Ճիօվ.— Ի՞նչ է, ըսէ նայիմ։

Փուն.— Մենք ո՞ւրկէ կուգանք կոր։

Ճիօվ.— Բրէմանոյէն, չես գիտեր աւանակ։

Փուն.— Ո՞ր կողմ կ'երթանք կոր։

Ճիօվ.— Շիրայ։

Փուն.— Աստուած պէլան տայ. մեզի Շիրայի տակառը խոթեցին։

Ճիօվ.— Կատակը ձգէ տէ, ինծի պատասխան տուր։

Փուն.— Շատ աղէկ տէր իմ։

Ճիօվ.— Ըսէ տեսնեմ, հրամաններս գործադրեցի՞ր...

Փուն.— տէր իմ, տանը դռանը մօտեցայ... մէյ մըն ալ ներսէն ականջիս ձայն մը եկաւ «շուտ փախիր Տօմաթէս, ձգէ Լէմոնատան, պատուհանէն վար ցատկէ» ըսաւ.

Ճիօվ.— Է՛յ վերջը։

Փուն.— Վերջը մէկը ինծի մօտենալով. «գիտցած եղիր որ, ըսաւ, այս գիշեր Իլիմոնատային սենեակն էի. բայց հօրաքոյրը հօրաքոյրին հետ հա՛վ, հա՛վ, ըրաւ նէ, ըսաւ, ուրիշ ճար մը չգտայ պատուհանէն վար ցատկեցի, ըսաւ։

Ճիօվ.— Այս խօսքերուն ամէնքն ալ ականջովդ լսեցի՞ր.

Փուն.— Ի հարկ է... ականջներովս և ուսերովս

ալ... որովհետեւ մարդը ցատկելու առենը վրաս ինկաւ քիչ մնաց որ տակը ճղմուէի...

ՃԻՕՎ.— Ի՞նչպէս կ'ըլլայ որ Էլէօնորան ինծի խաբէ, կենդանագիրս իրեն ղրկելէս վերջը։

ԲՈՒՆՁ.— Կատակ կ'ընես կոր աղա.

ՃԻՕՎ.— Կատակ ի՞նչ ըսել է.

ԲՈՒՆՁ.— Աղա, ձեզի բան մը պիտի ըսեմ բայց չը պիտի սրդողիք.

ՃԻՕՎ.— Ձեմ սրդողիր, շուտ զուրցէ...

ԲՈՒՆՁ.— Ինծի պատկեր քաշողին ղրկեցիք ա՛... որպէս զի ձեր կենդանագիրը նամակով մեկտեղ պահարանին մէջ դնելով նամակատան ձգելու... համար, պատկերը քաշող միւսիւն խոշոր աչքերովը ինծի նայեցաւ.

ՃԻՕՎ.— Ծուռ աչքերով ըսել կ'ուզես.

ԲՈՒՆՁ.— Այո՛, այո՛, ծուռ՝ ծուռ.

ՃԻՕՎ.— Է՛յ, վերջը...

ԲՈՒՆՁ.— Վերջը ըսաւ որ, եթէ Ձերդ Աղնուութիւնը փափաք կը յայտնէ սա գեղեցիկ կեցուածքդ և արբյի նմանող դէմքդ մէյ մը դծեմ ըսաւ.

ՃԻՕՎ.— Ի՞նչպէս արբ... ի՞նչ ըսել կ'ուզես։

ԲՈՒՆՁ.— Ա՛... ա՛... հին հայոց քաջերէն մէկը աղջկան պէս գեղեցիկ ըլլալուն համար դեղեցիկ արբ յորջորջեր են։

ՃԻՕՎ.— Ծո՛, արբ չէ. գեղեցիկ Արայ ըսել կ'ուզես։

ԲՈՒՆՁ.— Այո՛, այո՛, արայ, քեզի ո՞վ ըսաւ քի, արամա...

ՃԻՕՎ.— Է՛յ, վերջը։

ԲՈՒՆՁ.— Անանկ է նէ պատկերս դծէ ըսէ... այն ժամանակ սանկ կեցիր, ըսաւ. նանկ կեցիր ըսաւ.

ՃԻՕՎ.— Վերջապէս.

ԲՈՒՆՁ.— Վերջապէս. խոշոր. երկար, բարակ շատ ֆբրչա մը առաւ.

ՃԻՕՎ.— Աչք չինելու ֆբրչա.

ԲՈՒՆՁ.— Ո՛չ, անկէ աւելի բարակ.

ՃԻՕՎ.— Անկէ բարակը չ'ըլլար.

ԲՈՒՆՁ.— Ի՞նչպէս թէ չըլլար. խոշոր կոթով պատանի ֆբրչա մը, երկու վայրկեանի մէջ քաշեց, դարձուց, չինեց չիտկեց, լմնցուց, նայեցայ որ իմ քիթս ձերինէն աւելի պզտիկ և աւելի նուրբ, բերանս ձեւաւոր, ճակատս աւելի բարձր, քեզի բարութիւն մը ընելու համար քու պատկերիդ տեղը իմ պատկերս դրի ղրկեցի, է՜հ, աս խելքիս պտուկին ի՞նչ կ'ըսես.

ՃԻՕՎ.— Ծո՛, աւանակ, ի՞նչ ըրիր. ի՞նչ ա պուր խառնեցիր, հիմա Էլէօնորան քու պալխապախի պէս սուրաթբդ տեսնելու ըլլայ նէ ի՞նչ պիտի ըսէ...

ԲՈՒՆՁ.— Ատամ պէ դուն ալ. ի՞նչ պիտի ըսէ քեզի սիրելուն ինծի պիտի սիրէ...

ՃԻՕՎ.— Հայվան, էշէք, զոմէշ, հիմա տեսար մի, սիրելիէս զատուելուս պատճառ եղար. ինծի մտիկ ըրէ, Բունչինէլլա, քանի որ այս գործին խարմբխարբշ խառնուելուն պատճառ եղար, հիմա այս վայրկենիս հրամաններս պէտք է շատ գործադրես. հիմա տօն Ալֆօնս մօտէցային տունը կ'երթաս, պատկերին նմանելուդ համար քեզի Ճիօվաննի այսինքն իս պիտի կարծեն. ես ալ ետեւէդ գալով իբր թէ Բունչինէլլա քու ծառադ եմ. այս կերպով Էլէօնորային ինծի հաւատարիմ մնալը կը հասկնամ...

ԲՈՒՆՁ.— (մտածելով) Ես տօն Ճիօվաննի, դուք Բունչինէլլա...

ՃԻՕՎ.— Դուն աղա, ես ալ ծառայ.

ԲՈՒՆՁ.— Ո՛չ, ինծի նայէ, աս չըլլար... ասիկա իմ գործիս չի դար։

ՃԻՕՎ.— Ի՞նչու համար...

ԲՈՒՆՉ.— Որովհետեւ ես ծառայութիւնս ձգելով աղա ըլլամ նէ, ան ժամանակ ձեր ամսականը ամսէ ամիս ինծի կ'իյնայ տալ...

ՃԻՕՎ.— Աւանակ... ասիկա խաղ մըն է որ պիտի խաղամ.

ԲՈՒՆՉ.— Շատ աղէկ, է՛հ, նայինք դուն ծառայելու կերպը գիտե՞ս...

ՃԻՕՎ.— Ապուշ գիտցած եղիր որ. հրամայել գիտցողը, ծառայելն ալ գիտէ...

ԲՈՒՆՉ.— Աղէկ ամա, ես անգամ մը փորձել կ'ուզեմ, նախ և առաջ հագուստնիս փոխենք. (կը փոխեն)։

ՃԻՕՎ.— Շատ աղէկ, հրամմեցէք։

ԲՈՒՆՉ.— Բունչինէլլա...

ՃԻՕՎ.— Հրամմէ տէր իմ.

ԲՈՒՆՉ.— Էչ գլուխ... ինծի պէս աղաի մը հրամեցէք կ'ըսե՞ն... Բունչինէլլա...

ՃԻՕՎ.— Հրամմեցէք աղա.

ԲՈՒՆՉ.— Ամմատա մանկաթա ես եղեր հա՛. քիչ մը ալ մեծապատիւ աղնուաշուք և այլն կը խառնեն.

ՃԻՕՎ.— Ներողամիտ գտնուէցէք աղա...

ԲՈՒՆՉ.— Բունչինէլլա...

ՃԻՕՎ.— Աղնուաշուք տէր...

ԲՈՒՆՉ.— Նախաճաշս պատրաստ է.

ՃԻՕՎ.— Այո՛, մեծապատիւ տէր...

ԲՈՒՆՉ.— Է՛յ. նախաճաշս ի՞նչ է նայինք.

ՃԻՕՎ.— Աղուոր հաւկիթով պաստը...

ԲՈՒՆՉ.— Հէյէ նայէ սրբոր կերած խալթը...

ՃԻՕՎ.— Կը խնդրեմ տէր իմ մի բարկանաք...

ԲՈՒՆՉ.— Գնա... թէյը, բոմը պատրաստէ, մէկ խոշոր պնակ մը բիլաւ, էթրաֆը սօխ, սխտոր, քէսկին թուրբ, և հավուճ չարէ...

ՃԻՕՎ.— Բայց տէր իմ, այս կերպ կերակուրները

ստամոքսը կ'աւրէ, այսինքն միտէն կ'աւրէ...

ԲՈՒՆՉ.— Ծո՛ աւանակ ես քեզմէ մինտիա չեմ ուզեր կոր...

ՃԻՕՎ.— Ներեցէք տէր իմ, Ձեր մեծապատուութիւնը ինչ որ կը հաճի և փափաքի թող հրամայէ։

ԲՈՒՆՉ.— Վերջապէս էօքիւզ էս... ապուշ ես վէսսէլամ, ես Երուսաղէմ գացեր եմ որ ինծի հաճի կ'ըսես... Բունչինէլլա...

ՃԻՕՎ.— Մեծապատիւ տէր...

ԲՈՒՆՉ.— Բունչինէլլա...

ՃԻՕՎ.— Աղնուաշուք տէր...

ԲՈՒՆՉ.— Ծո՛ օ օ... Բունչինէլլա...

(Կ'երթան)

Վարագոյրը. փոխուի։

ԹԱՊԼՕ

Զարդարուն սենեակ մը.

ՏԵՍԻԼԳ.

ԷԼԷՕՆՕՐԱ, ԳՕԼՕՄՊԻԱ, ՏՕՆ ԱԼՖՕՆՍ

ԷԼԷՕ.— Կեցիր քեղի պոչ պօղազ. կապիկ, հիմա ես քու հախէդ կ'ուզամ.

ԳՕԼՕՄ.— Ո՞վ Աստուած իմ. մէկը չունիմ որ ինծի օգնութեան հասնի...

ԱԼՖՕՆՍ.— Նորէն ի՞նչ է ան. անկողնէն ելաք չելաք չուն ու կատուի պէս կռուիլ սկսաք։

ԳՕԼՕՄ.— Գիտցած ըլլաք որ...

ԷԼՕՆ.— Գիտցած ըլլաք որ։

ԳՕԼՕՄ.— Ես պիտի ՞զուրցեմ։

ԷԼԷՕ.— Առաջ ինծի կ'իյնայ խօսիլ, քանի որ տանը տիկինն եմ։

ԱԼՖ.— Ձայներնիդ կտրեցէք. մէկիկ մէկիկ զուրցեցէք։

ԳՕԼ.— Ի՞նչ զուրցեցի որ։

ՍԼՖ.— Զայնդ կորէ Գոլոմպինա։

ԳՕԼ.— Տէր իմ, զուրցեցի որ Տօն Ճիովաննին քու ամուսինդ պիտի ըլլայ...։

ՍԼՖ.— Ալ կը բաւէ, Գոլոմպինա ներս գնայ, ամէն ժամանակ աղջկանս պէտք է հնազանդիս և յարգես... հասկցա՞ր մի...։

ԳՕԼՕՄ.— Շատ աղէկ տէր իմ։ (Էլէօնորային) բաթիս, ճաթիս, Տօն Ճիովաննին պիտի առնես (կ'երթայ)։

ՍԼՖ.— Աղջիկս... Գոլոմպինան քեզի դէշ խօսք մը ըսած չունի. ըսեր է որ Տօն Ճիովաննիին հետ պիտի ամուսնանաս...

ԷԼԷՕ.— Հայր չեմ ուզեր, ես անանկ կապիկի դէմք ունեցող մարդուն հետ չեմ կրնար ամուսնանալ։

ՍԼՖ.— Ի՞նչէն գիտես։

ԷԼԷՕ.— Ղրկած պատկերէն։

ՍԼՖ.— Բայց աղջիկս, կրնայ ըլլալ որ պատկերահանը սխալ մը ըրած ըլլայ։

ԷԼԷՕ.— Ո՛չ, ո՛չ... պատկեր քաշողները կը նային որ իրենց քաշած կենդանագիրները աւելի գեղեցիկ ըլլան (կ'ուլայ)։

ՍԼՖ.— Մի լար աղջիկս, մի լար. վերջնական քեզի կը վստահեցնեմ որ եթէ Տօն Ճիովաննի ղրկած պատկերին պէս տգեղ է նէ կը մերժեմ զայն ինծի փեսայ առնել...

ԷԼԷՕ.— (Ուրախ) Հայր ձեր այս խոստումը ինծի կեանք պարգեւեց. ձեռքդ համբուրեմ հայր (կը պագնէ)։

ՏԵՍԻԼ Դ.

ՏՕՆ ԱԼՖՕՆՍ, ԳՕԼՕՄՊԻԱ, ԵՒ ՏՕՆ ԼՕՐԷԶ

ԳՕԼ.— Տէր իմ, Տօն Լօրէզ քեռորդիդ եկաւ։

ԱԼՖ.— Զուրցէ որ հոս չեմ։

ԳՕԼ.— Զուրցեցի, բայց բռնի ներս մտաւ։

ԼՕՐԷԶ.— (Մտնելով) հօրեղբայր, ի՞նչու համար երեսդ ինձմէ կը պահես։

ԱԼՖ.— Բանի որ չուզելս գիտես նէ ի՞նչու եկար... Է՛յ ի՞նչ է զուրցէ նայինք. ես այսօր աղջկանս երջանկութեանը համար կ'աշխատիմ կոր։

ԼՕՐ.— Վա՜յ, աղջիկնիդ կ'ամուսնացնէք կոր տէ ինծի լուր չէք ղրկեր։

ԱԼՖ.— (Մաղրելով).— Ներողութիւն, չէի գիտեր... հա՛ իրաւ կը վայլէր որ ձեզի ալ խորհուրդ հարցնէի. ինչ որ է... Է՛յ ի՞նչ ըսել կ'ուզես, ըսէ նայինք...

ԼՕՐ.— Հօրեղբայր կիսցած եղէք որ, Տօն Ճիովանիին քրոջը Անննային սիրահարուած էի, աղջիկնիդ ուզող Տօն Ճիովաննիին, գիշերուան մէջտեղ պատուհանին տակը կեցած դաղտնի կը տեսնուէինք, յանկարծ աղջկանը եղբայրը վրայ դալով ինծի մեռցնել ուզեց. բայց ես անկէ ճարպիկ բրթայ, և սուրս քաշելով մէկ զարնելով գետին փռեցի։

ԱԼՖ.— Կեցցես... էյ, հիմա ինձմէ ի՞նչ կ'ուզես...

ԼՕՐ.— Լսեցի որ աղգականները ինձմէ վրէժ պիտի լուծեն. փախայ և հոս ապաստանեցայ...

ԱԼՖ.— Հասկցայ, գլուխնիդ նեղը եկած ժամանակը միտքերնիդ կ'իյնամ, այնպէս չէ՞...

ԼՕՐ.— Կը խնդրեմ հօրեղբայր, ինծի աս անստուգութենէս փրկէ։

ԱԼՖ.— Բանի որ հօրեղբօրս որդին ես, չեմ ուզեր քեզի անոնց ձեռքը յանձնել, հոս նստէ...

ՏԵՍԻԼ Ե.

ԱՌԱՋԻՆՔ, ԳՕԼՕՄՊԻԱ ԵՒ ՏՕՆ ՃԻՕՎԱՆՆԻ

ԳՕԼ.— Տէր իմ Տօն Ճիօվանն՝ն եկաւ։

ՃԻՕՎ.— (Ներս մտնելով) Բարի լոյս միւսիներ...

ԱԼՖ.— Բարի եկաք Տօն Ճիօվանն՝ի։

ՃԻՕՎ.— Ներողութիւն... ես Տօն Ճիօվանն՝ին չեմ, ես անոր ծառան Բուն՝չինէլլան եմ...

ԱԼՖ.— Հապա աղանիդ ո՞ւր է։

ՃԻՕՎ.— Ան ալ սանդուխներէն վեր կ'ելլէ կոր։

ԱԼՖ.— Տօն Լօբէյ, գնա, վազէ, աղջկանս զուրցէ որ փեսաս դիմաւորելու երթայ. ես ալ երթամ հաղուստներս փոխեմ... (կ'երթայ)։

ԳՕԼ.— (Ինքնիրեն) Ի՞նչ չնորհքով երիտասարդ. ի՞նչ յալ չիք է. կարծես թէ մէկ տեսնելովս սրտիս փակաւ, ամուրի ըլլար տէ ինծի հետ ամուսնանար. որչափ գոհ կը մնայի...

ՃԻՕՎ.— (Ինքնիրեն) այս աղջկանը ուշադրութեամբ զիս դիտելը ի՞նչ պիտի ըլլայ որ ինծի սիրահարուի...

ԳՕԼ.— (Ինքնիրեն) Մօտենալու չեմ համարձակիր կոր։

ՃԻՕՎ.— (Ինքնիրեն) Կարծեմ թէ ինծի աչքան կուտ ըրաւ, դէշ չըլլար, ասանկով Էլէօնարին ինծի հաւատարիմ մնալուն տեղեկութիւն՝ը կ'առնեմ։

ԳՕԼ.— (Ամչնալով). Բարի եկաք պարոն։

ՃԻՕՎ.— Բարի տեսանք, հաղար բարի օրիորդ...

ԳՕԼ.— Տա՛ն ծառան էք, պարոն։

ՃԻՕՎ.— Այո օրիորդ։

ԳՕԼ.— Ես ալ նոյնպէս.

ՃԻՕՎ.— Ըսելէ արհեստակից ենք...

ԳՕԼ.— Այո, անանկ է եա... արդեօք ամուսնացած էք թէ ամուրի էք...

ՃԻՕՎ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք...

ԳՕԼ.— Զըլլար միթէ միասին ամուսնանանք...

ՃԻՕՎ.— Ի՞նչու չէ անուշիկս, ինձմէ ախորժեցաք...

ԳՕԼ.— Զեզի պէս աղուոր երիտասարդի մը ո՞չ չի հաւնիր...

ՃԻՕՎ.— Շատ աղէկ... քանի որ ինծի հաւնեցաք և սիրեցիք... ես ալ ձեզի խօսք կուտամ որ, որ ժամանակ որ Տօն Ճիօվանն՝ին ձեր հանրմին հետ ամուսնանալու ըլլայ, դուք ալ Բուն՝չինէլլայ՝ին ամուսինը պիտի ըլլաք...

ԳՕԼ.— Ա՜հ, ի՞նչ երջանկութիւն...

ՏԵՍԻԼ Զ.

ԱՌԱՋԻՆՔ, ԱԼՖՕՆՍ, ԼՕԲԷՅ, ԷԼԷՕՆՕՐԱ ԵՒ ԲՈՒՆՋԻՆԷԼԼԱ

ԲՈՒՆՋ.— (Ներսէն) Է՜հ, ո՞ւր էք... կառապաններ, էշեր, կովեր; հայվաններ, և անոնք որ լարլարներով և լոբլոբներով կը վերջանան... (կը մտնէ)։

ԱԼՖ.— Բարի եկաք Տօն Ճիօվանն՝ի։

ԲՈՒՆ.— Դուն ո՞վ ես պէ... ճիապան չըլլաս...

ԱԼՖ.— Ուհա՜՜... ես այս տանը տէրն եմ...

ԲՈՒՆ.— Էշէկին մեծն ես...

ԱԼՖ.— Շնորհակալ եմ, բայց ի՞նչու համար...

ԲՈՒՆ.— Որովհետեւ ինծի պէս միւսի մը կուգայ տէ. դիմացը պատրաստ սեղան մը չի գտներ...

ԱԼՖ.— Անոր ալ ժամանակը կայ Տէր իմ...

ԲՈՒՆ.— Շատ աղէկ, ժամանակը գայ նէ բերէք...

ԳՕԼ.— (Մտնելով) Ես սպասուհի եմ...

ԲՈՒՆ.— Ո՛հ, չի հասկցայ...

ԳՕԼՕՄ.— Այսինքն ես... պէսլէմմէ եմ այս տանը մէջ...

ԲՈՒՆ.— Եա՛... զուն պէսլէմմէ ես հա՛... ես ալ ալ քեզի պէս պէսլի, եաղլը հանըմները կը սիրեմ... (վրան երթալով) հա՛... հա՛... հա՛...

ԱԼՖ.— Բունչինէլլա...

ՃԻՕՎ. ԲՈՒՆ.— (Երկուքը մէկ) Հրամմեցէք տէր իմ...

ԱԼՖ.— Ձեզի չէ. ծառաներնուդ կ'ըսեմ։

ԲՈՒՆ.— Ես ինչ գիտնամ (ցած Ճիովաննիին) ուրիշ անդամ չուտ պատասխան տուր...

ԱԼՖ.— (Ճիովաննիին) ի՞նչ կը զուրցէ կոր։

ՃԻՕՎ.— Օրիորդը այսինքն նշանածը տեսնել կ'ուզէ կոր։

ԲՈՒՆ.— Այո՛, այո՛, տեսնել կ'ուզեմ։

ԱԼՖ.— Արդէն անոնք ալ կուգան կոր (կը մտնեն)։

ԷԼԷՕ.— Ո՛վ Աստուած իմ. աս ինչ տգեղ մարդ է...

ԱԼՖ.— Տօն Լօբէչ, պարոն փեսային աթոռ մը տուր (Բունչինէլլա աթոռին վրայ նստելու կ'ըլլայ, բայց անկէ առաջ Տօն Լօբէչ կը նստի)։

ԲՈՒՆ.— (Ցած Ճիովաննիին) աղա, աս պաղ աղուր մարդուն կերած խալթը տեսա՞ր մի...

ՃԻՕՎ.— Այն տեղը քուկդ է պատճառով մը տեղէն հանէ։

ԲՈՒՆ.— Կ'ուզե՞ս մի սանկ երեսին պօռամ։

ՃԻՕՎ.— Չէ՛, ձեւով մը հասկցուր։

ԲՈՒՆ.— (Տօն Լօբէչին) Միւսի ձեզի բան մը կրնամ հարցնել։

ԼՕԲ.— Հրամմեցէք, մէկ չէ երկուք հարցուցէք։

ԲՈՒՆ.— Ոտքի խաղէն կը հասկնա՞ք, այսինքն վալս, բօլքա հւայլն։

ԼՕԲ.— Ոչ պարոն։

ԲՈՒՆ.— Անանկ է նէ ոտքի ելլ, քեզի սորվեցնեմ (կը հանէ և տեղը ինք կը նստի) հա՛, հա՛, հա՛... ահա առանկ պէտք է ըլլայ պարոններ, միւսիւներ, մատամներ հիմակուան զամանը առանկ կը վերցնէ.

ԷԼԷ.— (Ինքնիրեն) Աստուած իմ... այս տխմար, էշ մարդը իմ ամուսինս պիտի ըլլայ...

ԲՈՒՆ.— Աման Աստուած իմ, հիմա կը խենդենամ. աս աղուոր աղջիկը իմ կնիկս պիտի ըլլայ...

ԱԼՖ.— Բունչինէլլա։

ԲՈՒՆ. ՃԻՕՎ.— Հրամմեցէք աղա։

ԱԼՖ.— Բայց խօսքս ձեզի չէ, ծառանիդ կը կանչեմ կոր։

ԲՈՒՆ.— Է՛հ... ես ինչ գիտնամ։

ԼՕԲ.— Ճամբորդութիւնդ ի՞նչ եղաւ։

ԲՈՒՆ.— Շատ գէշ...

ԱԼՖ.— Ի՞նչու համար.

ԲՈՒՆ.— Որովհետեւ կօշիկներուս մէջ չէօր չէօր լեցաւ և ոտքերս կտոր կտոր եղաւ... հա չէօյլէ պէ...

ՃԻՕՎ.— Տէր իմ, քիչ մը թօհաֆճա է։

ԲՈՒՆ.— Այո՛, ես թօհաֆճի ան ալ մանիֆաթուրաճի է...

ԱԼՖ.— Սուրնանդակի կառքով չեկա՞ք։

ԲՈՒՆ.— Այո, կառքը տոջեւէն, մենք ալ ետեւէն կուգայինք կոր։

ԱԼՖ.— Բունչինէլլա։

ՃԻՕՎ.— Հրամմեցէք աղա։

ԱԼՖ.— Ի՞նչ ըսել կ'ուզէ։

ՃԻՕՎ.— Կառքէն իջանք և քիչ մը ժամանակ անցնելու համար պատեցանք ըսել կ'ուզէ...

ԼՕԲ.— Սա հասկնալ կ'ուզիմ թէ եղբայրդ մեռ-

ցնողին մասին, անոր նկատմամբ, ի՞նչ կարծիք ունիս ո՞ւր է ձեր հայրենիքը։

ԲՈՒՆ.— (Ճիովաննիին) Է՛հ, ճանըմ սա մարդուն նայէ ի՞նչ կ'ըսէ. ե՞րբ ձեր գալը յարկինք պիտի անցնի կ'ըսէ։

ՃԻՕՎ.— Ճանըմ, այս մարդը կը հարցնէ թէ հայրենիքդ ո՞ւր է...

ԲՈՒՆ.— Հա... հիմա հասկցայ։

ՃԻՎ.— Քրէմոնա... չես գիտեր էշ... իշտէ ասանկ...

ԲՈՒՆ.— (Տօն Լօրէչին) Քրըմ թար թար. չես գիտեր էշ... իշտէ ասանկ...

ԼՕ.— Զի զուրցես ի՞նչ եղաւ եղբայրդ։

ԲՈՒՆ.— (Ճիովաննիին) չի զուրցես. էշէկ ի՞նչ եղաւ եղբայրդ...

ՃԻՕՎ.— Ա՜հ, ի՞նչ տխուր վիճակ... ո՞վ գիտէ որ խայինին գործն է. զուրցէ որ սպաննեցին...

ԲՈՒՆ.— Ա՜խ... ի՞նչ թօրթուլու վիճակ... ո՞վ գիտէ որ մայմունին գործն է... զուրցէ որ սպաննախ կերցուցին. իշտէ ասանկ միւսիներ...

ԼՕԲ.— Է՜հ... եղբայրդ սպաննողը չգտան...

ՃԻՕՎ.— Ո՛չ՝ պարոն, եթէ ոճրագործը գտնուէր. Տօն Ճիովաննին եղբրը վրէժը կը լուծէր։

ԼՕԲ.— Դուն լուէ... քեզի պէս ծառաներու հետ խօսիլ չարժեր...

ՃԻՕՎ.— Այո՛, թէպետեւ ծառայ եմ. բայց ոչ մէկ առեն չեմ ուզեր ալ այս պատուոյն արատ բերել...

ԼՕԲ.— Քեզի պատասխան տալ մինչեւ անգամ չարժեր... հիմա գիտցած եղիր որ Տօն Ճիովաննի, եղբայրդ մեռցնողը ես եմ, և քրոջդ սիրահարն ալ ես եմ...

ԲՈՒՆ.— Դուն հա՛... ինչուս պէտք։

ԼՕԲ.— Եւ քեզի հետ հոս պիտի ճնամ հիմա մեռնամարտելու պատրաստ եմ...

ՃԻՕՆ.— (Բունչինէլլային ցած) ընդունէ առաջարկը։ ընդունէ։

ԲՈՒՆ.— Ի՞նչ ընդունիմ... ընդունիմ, ընդունիմ տէ անկէց ալ էշէք ճէնտէթին ընդունիմ...

ՃԻՕՎ.— Ընդունէ կ'ըսեմ կոր։

ԲՈՒՆ.— Այո՛, կ'ընդունիմ։

ԼՕԲ.— Շատ աղէկ. հիմա կ'երթամ և զէնքերը կը բերեմ, ոտսը վայրկեանէն կուգամ (կ'երթայ)։

ԲՈՒՆ.— Գիտնին տակը անցնիս մարդ։

ԷԼԷՕ.— Հայր, ես հոս չեմ կրնար կենալ, ներս կ'երթամ...

ԱԼՖ.— Գնա աղջիկս... Գօլոմպինա՝ աղջկանս հետ միասին գնա. ես ալ երթամ զէնքերս պատրաստեմ (կ'երթայ).

ՏԵՍԻԼ Է.

ՏՕՆ ՃԻՕՎԱՆՆԻ, ԲՈՒՆՉԻՆԷԼԼԱ

ԲՈՒՆ.— Աղա, սա չաքէթս հանէ տեսնեմ...

ՃԻՕՎ.— Ինչու համար։

ԲՈՒՆ.— Առ սա քու Տօն Ճիովանդ, տուր իմ Բունչինէլլաս։

ՃԻՕՎ.— Ի՞նչու, ի՞նչ եղար։

ԲՈՒՆ.— Կ'ուզես որ մարդը ինծի անդիի աչխարհ խրկէ։

ՃԻՕՎ.— Ինծի մտիկ ըրէ... քեզի երկու խրատ ունիմ. առաջին անդամ պատիւդ պաչպանէ. երկրորդ մեռցուր, մեռցնելու համար և չուտ մը ինծի լուր բեր. ես ամէն փորձանքի դէմ կեցած եմ։

ԲՈՒՆ.— Աղէկ ամա, այդ ըսածներդ երբոր ան

Ա 37964
ՀԱՅԿ ԳՐՉԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ընելու ըլլայ նէ այն ատեն քեզի ո՞վ լուր պիտի բերէ։

ՃԻՕՎ.— Ինծի մտիկ ըրէ. Տօն Լօբէզ եկած ատենը ինքզինդ ծանր ցուցուր. և եղբայրս ուրտեղ, ի՞նչով, և ի՞նչպէս մեռցնելը կը հարցնես... ան քեզի պիտի պատասխանէ թէ մութին մէջ մեռցուցի, այն ժամանակ լոյսը մարես նէ ես կը հասկնամ և քու տեղդ կը մենամարտիմ։

ԲՈՒՆ.— Հա՛, նայէ հիմա ասիկա քիչ մը գործս եկաւ. բայց չըլլայ թէ չուկայ երթալնիքէն առնի կօրկօտէն եղանքի պէս բաներ մը չըլլայ։

ՃԻՕՎ.— Ապուշ. ես պատիւս քու ձեռքդ չեմ ձգեր։

ԲՈՒՆ.— Աստուած վերջը բարին ընէ։

ՏԵՍԻԼ Ը.

ՏՕՆ ԱԼՖՕՆՍ, ՏՕՆ ԼՕԲԷԶ, ԲՈՒՆԶԻՆԷԼԼԱ

ԱԼՖ.— Քեզ տեսնեմ Տօն Լօբէզ, բնաւ մի վախնար... բնաւ մի վախնար... մէկ զարնելուդ հակառակորդդ գետին տապալէ... Մնացածը ինծի ձգէ։

ԼՕԲ.— (Բունզինէլլային) հիմա պիտի զարնուիք։

ԲՈՒՆ.— Ասիկա յայտնի բան մըն է։

ԼՕԲ.— Տակաւին չզարնուած ըսելիք բան մը ունի՞ս։

ԲՈՒՆ.— Անանկի պէս բան մը... մենք ինչո՞ւ համար կը զարնուինք կոր, աւելի աղէկ չըլլար որ զէնքով կռուինուս.. իրարու մէկ քանի կէց եւայլն զարնենք, վերջն ալ դինեասեն մը կ'երթանք, մէկ քանի հատ տուզիքօ կը ճնկենք և կը հաշտուինք վէսէլամ։

ԼՕԲ.— Է՜հ, երկար խօսք չուզեր դէմս ել նայիմ։

ԲՈՒՆԶ.— Արշ՛... հայտէ նայինք.

ԼՕԲ.— Քաշէ սուրդ.

ԲՈՒՆԶ.— Թո՜ւ... աս չեմ սեպեր կնոջիր. մի աճապարեր, չես ուզեր որ չի կռուած...

ԼՕԲ.— Իրաւունք ունիս նայէ կուրծքս բան մը կայ.

ԲՈՒՆԶ.— Այո՛, չապիկիդ արդուկը քիչ մը հատտէ և թէ պատռուած.

ԼՕԲ.— Հապա քուկդ... մօտեցեր նայինք.

ԲՈՒՆԶ.— Դուն ալ ինծի մօտեցիր,

ԼՕԲ.— Քաշէ սուրդ...

ԲՈՒՆ.— Դարձեալ... ինչո՞ւ համար.

ԲՈՒՆԶ.— Ես քեզի բան մը զուրցեմ. ես մինչև որ չի բարկանամ չեմ կռուիր. պատճառը ըսէ որ բարկանամ և սուրը սիրտդ խօթեմ...

ԼՕԲ.— Շատ աղէկ... եղբայրդ մեռցնողը ես էի...։

ԲՈՒՆԶ.— Ատոր համար ինչո՞ւ բարկանամ, կ'ըլլար որ ան ալ քեզ կը մեռցնէր.—

ԼՕԲ.— Քրոջդ սիրահարուեցայ...

ԲՈՒՆԶ.— Աւելի աղէկ ա՛... քեռայրս կ'ըլլայիր...

ԼՕԲ.— Բայց դուն չես բարկանար կոր.

ԲՈՒՆԶ.— Ի՞նչ ընեմ, բնութիւնս այնպէս է, ասանկ բաներէն բարկութիւն չեմ խմանար, քիչ մը պատուոյ դպչելիք բաներ մը զուրցելու ես որ բարկանամ և սուրս սիրտդ խօթեմ...

ԼՕԲ.— Շատ աղէկ, դուն քաջ երիտասարդ չես...

ԲՈՒՆԶ.— Է՜հ, այո, ես քաջ երիտասարդ չեմ...

ԼՕԲ.— Անսիրտ ես...

ԲՈՒՆԶ.— Անսիրտ թող ըլլամ. աւելի աղէկ

ԼՕԲ.— Էօրթլէք ես.

ԲՈՒՆԶ.— Էօրտէք եմ մի, քաշէ սուրդ.

Լօր.— Ես Եթէ՛ք ես ըսի...

Բունչ.— Հա, ես Լօրատէք կարծեցի. (ինքնիրեն) ժամանակ անցնելու համար ինչեր կընեմ կոր տէ, նայէ ժամանակին կը հասնիմի՞ ուղուրուզը.

Լօր.— Ալ համբերութիւնս հատաւ քաշէ սուրդ նայիմ...

Բունչ.— Ա, ա՛, կը կարծես թէ կը վախնամ դուն գիտես ո՞վ է դիմացինդ, տօն Ճիօվաննիին ներկայութեանը կը զտնուիս, զուն տօն Ճիօվաննիին ի՞նչ ուժի, ի՞նչ կորովի տէր ըլլալը չես գիտեր...

ՏԵՍԻԼ Թ

ԱՌԱՋԻՆՔ, ՏՕՆ ՃԻՕՎԱՆՆԻ

Ճիով.— (գաղտնի) մարէ լոյսը.

Բունչ.— (կը մարէ) հիմա քաշէ սուրդ

Լօր.— Հա՛ սկսինք...

Բունչ.— Թու... աս ալ չեմ սեպեր...

Լօր.— Դարձեալ, ինչու համար.

Բունչ.— Բան մը տահա հարցունիմ եղբայրս ի՞նչպէս սպաննեցիր.

Լօր.— Մութին մէջ.

Բունչ.— Անանկ է նէ ես ալ քեզի մութին մէջ պիտի մեռցնեմ. լոյսերը մարէ (Լոյսը կը մարեն Ճիովանիի գալով սուրը Բունչինեղլայինն ձեռքեն կառնէ եւ ինքը կը մեռամարտի)

ՏԵՍԻԼ Ժ

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԳՕԼՕՄՊԻՆԱ

Գօլօմ.— Եկայ. եկայ.

Լօր.— Կորսուէ հոսկէ Գօլօմպինա.

Բունչ.— Կորսուէ սրկէ դարապինա, հիմա սուրս քեզի կը զարնեմ հա՛

Լօր.— Շուտ կորսըուէ ասկից...

Բունչ.— Հիմա աղիքներդ դուրս կը թափեմ հա՛, հայտէ գործիդ գնա.

(Գօլօմպինա կերթայ)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՄԵՆՔՆ ԱԼ ԿՈՒԳԱՆ ԲԵՄ

Ալֆ.— Այս ի՞նչ է, երկու հոգի մէկ մարդու դէմ.

Բունչ.— Ոչ՛, կեցէք ։ որ խնդիրը հասկըցնեմ, դուք որու՞ հետ կռուիլ կուզէիք, Տօն Ճիովաննիին հետ այնպէ՞ս չէ... անանկ է նէ ահաւասիկ Տօն Ճիովաննին, ես ալ անոր Բունչինեղլա ծառան.

Ճիով.— Այո, շատ չիտակ կը խօսի. ես Տօն Լոբէզին հետ միայնակ, մենամարտեցայ, եթէ կուզէք մենամարտը շարունակենք...

Լօր.— Ո՛չ պարոն, եթէ ներող ըլլանք...

Ալֆ.— Այո՛, ներել իրեն պարտքն է, քանի որ փեսաս պիտի ըլլայ, իրաւ է թէ եղբայրս մեռու-

ցիր բայց գիտնալով չէ, և թէ միանգամայն դուն ալ անոր քեռայրը պիտի ըլլաս։

Ճիովա։— Ես արդէն ներեցի։ հիմա կուզեմ հասկընալ թէ մատմազէլը ինծի հանդէպ ունեցած սիրոյն հաւատարիմ մնացած է...

Էլէօ։— Այ՛ո... Մի միայն իմ սիրոս ձեզի համար կը բաբախէ...

Գօլ։— (Ճիովանիին) բայց տէր իմ, դուք ալ խաբեցիք։

Ճիով։—Այ՛ո, մատմազէլ ես ձեզի զուրցեցի որ ժամանակ որ Տօն Ճիովաննին մատմազելիդ հետ ամուսնանալ... դուք ալ Բուենչինէլլային ամուսինը պիտի ըլլաք։

Ալֆ։— Անանկ է նէ ձեռքերնիդ իրարու միացուցէք

Բուենչ։—Դուն ալ երկնցուր նայիմ սա մինինիկ թաթիկներդ։

Գօլ։— Ինչ օգուտ ասոր ալ չնորհակալ ըլլալու է։

Ալֆ։— Երթանք։ հարսանիքի պատրաստութեան սկսինք։ և ասկէ վերջ իրար հոտուրտալով ընկերային կեանք մը անցնենք...

Բուենչ։— Մեռնելու երթալնիքէն զուարճութիւնը հանդստութիւնը գտանք։ խաթմերլի ըլլալով ալ մինի, մինի կնիկ մ'ալ առինք։ տառօսը չըլլաղներու գլուխը։

Վարագոյր կիջնէ

ՎԵՐՋ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ
ԲՈՒՆԴԱՍԵՆՅԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220037964

[204]

A II 37964

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

		Ղրշ.
Ակնոցի Հաճի Աղան	Յ. Յ. Ամիրեանց	45
Արչին Մալ Ալան		15
» » » Հայատառ Թուրքերէն		25
Անձնուէր Ընկերը		50
Լէպլէպիճի		30
Շատախօս Սափրիչը		15
Ախացի Սափրիչը	Յ Պապէսեան	10
Ամերիկահայ Փեսացուն կամ Տայը Կարապետ		25
Բարեկենդանի Անկուտինները		15
Դղումի Վաճառականը		15
Երանոս Ազբար	Տ. Փափազեան	20
Երկու Խուլեր	Մոլիէր	15
Թիք Թաք		10
Կրլ Սքաութ կամ Մատոս Մէջն է	Ե. Թօլաեան	50
Սատանայ		10
Սիբլօք		10
Գողը	Տ. Միրբօ	15
Հնարամիտ Վարձակալը		10
48 Օխանոց գլխու փորձանքը		20
Վիրի ճաշարանին սպասաւորը		15
Գործարանին Երկրաչափը		15
70նոց փեսացուն		10
Գառնուկը մանկական թատ.		15
Խէչօին թուղը		10

Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Գրատունը կը հայթայթէ Դրպրոցական, Վիպական, Թատերական, Պատմական, Բանաստեղծական ամէն տեսակ Հայերէն գիրքեր եւ այլն, եւ այլն։

Հասցէ՝

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Ըէչիա էֆ. խան

ԳԻՆ 10 ՂՐՇ